

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ԱՆԻ ՍԵՅՐԱՆԻ

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏԱՋՈՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՋԱՐԳԱՅՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ
ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ԺԳ.00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (աշխարհագրություն)
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2022

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ, պրոֆեսորի պաշտոնակատար
Յուրիկ Հայկազի Մուրադյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հովիկ Յախշիբեկի Սայադյան
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
Հասմիկ Գրիգորի Սարգսյան

Առաջատար կազմակերպություն՝ **Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2022 թ. հունիսի 10-ին՝ ժամը 12:00-ին, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2022 թ.-ի ապրիլի 28-ին:


«Մանկավարժություն» 020

մասնագիտական

խորհրդի գիտական քարտուղար,

մանկավարժական գիտությունների

թեկնածու, դոցենտ՝



Թերեզա Յուրիի Ազատյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: XXI դարի մեդիահոսքերի, հարափոխ իրականության, աշխարհագրության և նրա ուսուցման մեթոդիկայի զարգացման արդի միտումները ենթադրում են դպրոցականների զինել հավաստի գիտելիքներով, գիտահեն որոշումներ կայացնելու հմտություններով, որոնց հիմքում են հետազոտական կարողությունները: Թեպետ ըստ հիմնական դպրոցի «Աշխարհագրություն» և «Հայաստանի աշխարհագրություն» առարկաների գործող չափորոշիչների և ծրագրերի՝ առանցքային է դպրոցականների աշխարհագրական հետազոտական գործունեությունը, ուսուցման տեխնոլոգիաների դերը համարժեքորեն չի դիտարկվել առարկայի ուսուցման մեթոդաբանության մեջ:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է մի կողմից հանրակրթության առջև դրված նոր՝ ստեղծագործ, ինքնուրույն, բանիմաց, հայրենասեր մարդու ձևավորմամբ, այդ համատեքստում դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման անհրաժեշտությամբ, «Աշխարհագրություն» առարկայի դպրոցական դասընթացի ընձեռած հնարավորություններով, ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման հրամայականով, մյուս կողմից՝ նշված հիմնախնդրի լուծմանը միտված տեսության և պրակտիկայի անկատարությամբ:

Հետազոտության նպատակը դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացմանը նպաստող մեթոդական համակարգի մշակումն է («Աշխարհագրություն» առարկայի օրինակով):

Հետազոտության խնդիրներն են.

1. ուսումնասիրել հիմնական դպրոցում աշխարհագրության հետազոտահեն ուսուցման գործընթացի կազմակերպման առկա փորձը,
2. վերլուծել հետազոտահեն ուսուցման մանկավարժական պայմանները, արդի ուղիներն ու միջոցները, այդ թվում՝ աշխարհագրության և այլ առարկաների զուգադրման ազդեցությունը դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման վրա,
3. առաջադրել աշխարհագրության ուսուցման գործընթացում դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացմանը

նպաստող ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ, մշակել համապատասխան մեթոդական համակարգ՝ ներառելով դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացմանը միտված հետազոտական գործնական առաջադրանքներ, ուսումնասովորական նյութեր, հետազոտության փուլերի կազմակերպման երաշխավորություններ, տեխնոլոգիական քարտեր, դասի պլաններ, թեմատիկ միավորներ, վերջնարդյունքների գնահատման սանդղակներ, ուղեցույցներ:

4. փորձարկել առաջարկված մեթոդական համակարգը, առաջադրանքները հանրակրթական դպրոցներում, գնահատել դրանց արդյունավետությունը:

5. Վերլուծել փորձարկման արդյունքները:

Հետազոտության օբյեկտը ՀՀ հիմնական դպրոցում աշխարհագրության ուսուցման միջոցով դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման գործընթացն է:

Հետազոտության առարկան հիմնական դպրոցում «Աշխարհագրության» ուսուցման գործընթացում դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացմանը նպաստող ուսուցման տեխնոլոգիաներն են:

Հետազոտության տեսական և գործնական մեթոդները.

- Աշխարհագրական, մանկավարժական, հոգեբանական գրականության պատմահամեմատական վերլուծություն, առկա փորձի ընդհանրացում և գնահատում:

- Մոդելավորում, զրույց, անկետավորում, փորձարարական ուսուցում:

Հետազոտության մեթոդաբանական հիմք են ծառայել.

- Հայ և համաշխարհային մանկավարժության մեջ հումանիստական, անձնակենտրոն մոտեցման հիմնարար դրույթները (Ժ.Ժ. Ռուսո, Զ. Դյուի, Ժ. Պիաժե, Դ. Անհալթ, Խ. Աբովյան, Շ. Ամոնաշվիլի, Կ.Դ. Ուշինսկի, Յ.Ա. Կոմենսկի, Ա.Ս.Մակարենկո, Ա.Դիստերվեգ), հետազոտահեն ուսուցման, կառուցողական կրթության տեսությունը և փորձը (Լ. Վիգոտսկի, Ա. Դարինսկի, Ռ. Սփրոնքեն-Սմիթ, Բ. Մուրդոք, Ս. Զասթիս, Գ. Բրուտյան),

- Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների և մեթոդների վերաբերյալ աշխատանքները (Մ. Աստվածատրյան, Ա. Թոփուզյան, Լ. Ասատրյան, Զ. Գյուլամիրյան, Հ. Պետրոսյան, Լ. Նազարյան, Ժ. Թադևոսյան, Գ. Հարությունյան, Ա. Վերբիցկի, Ա. Լեոնտև, Ա. Ֆեոդորով, Գ. Սելևկո),
- Աշխարհագրության ուսուցման մեթոդիկայի հայեցակարգերը (Թ. Հակոբյան, Ս. Դայան, Ա. Մինասյան, Ա.Աջամոջյան),
- Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանությունը (Լ. Ասատրյան, Գ. Հակոբյան, Գ.Հովհաննիսյան):

Հետազոտությունն իրականացվել է երեք փուլով:

Առաջին փուլ (2014-2015 թթ.) սահմանվել են հետազոտության ուղղությունները, ուսումնասիրվել, հավաքագրվել և վերլուծվել են հետազոտության թեմայի վերաբերյալ գրականությունը, տեղական և միջազգային փորձը:

Երկրորդ փուլ (2016-17 թթ.): Հստակեցվել են հետազոտության վարկածը և խնդիրները, մշակվել հետազոտական առաջադրանքներ, փորձարարական դասերի իրականացման չափանիշներն ու քայլերը: Ընթացիկ արդյունքները ներկայացվել են տեղական, միջազգային գիտաժողովների և աշխատաժողովների ընթացքում, գիտական հոդվածների հրապարակման միջոցով, ատենախոսության տեքստում:

Երրորդ փուլ (2017-22 թթ.): Իրականացվել է փորձարարական ուսուցում հետազոտության բազա ընտրված դպրոցներում: Միջազգային փորձին ծանոթանալու նպատակով հեղինակն ուսանել է Վիեննայի Բնական ռեսուրսների և կենսաբանական գիտությունների համալսարանում (2019 թ.): Տեղական և միջազգային փորձի համադրման միջոցով ամփոփվել է ատենախոսության տեքստը, ձևակերպվել են եզրակացությունները, հրապարակվել գիտական հոդվածները:

Հետազոտության բազա են հանդիսացել Երևանի «Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիրը, Երևանի Լ.Միրիջանյանի անվ. հ.155 հիմնական և թիվ 175 միջնակարգ, Տավուշի մարզի Դեղձավանի հիմնական դպրոցները:

Հետազոտության գիտական նորույթը.

- Վերլուծվել են աշխարհագրության ուսուցման գործընթացում դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման պայմանները, չափանիշները, աշխարհագրական հետազոտական գործընթացի փուլերը:
- Տեղայնացվել, մշակվել և փորձարկվել են դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացմանը միտված գործնական առաջադրանքներ, վերջնարդյունքների գնահատման սանդղակներ, ստեղծվել են «im.dproc.am» կայքում տեղադրված 7-րդ դասարանի «Աշխարհագրություն» դասընթացի առաջադրանքները, աշխարհագրական մի շարք նախագծեր՝ հենվելով միջառարկայական կապերի, Բ.Բլումի աստիճանակարգի, մեր մշակած աշխարհագրական հետազոտության քայլաշարի կիրառման վրա:
- Տեղայնացվել և առաջադրվել են դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացմանը նպաստող ուսուցման ժամանակակից մի շարք տեխնոլոգիաներ, օրինակ՝ նախագծային, պրոբլեմային, քննադատական մտածողության, մեդիակրթական, և համապատասխան մեթոդական համակարգ (պրոբլեմային շարադրանքի, մասնակիրոնոդական և հետազոտական գործունեության մեթոդները):

Հետազոտության տեսական նշանակությունը:

1. Համակարգվել են հետազոտահեն ուսուցման վերաբերյալ հայ և համաաշխարհային մանկավարժ մտածողների գաղափարները, ընդհանրացվել են դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման վերաբերյալ տեսական և մեթոդաբանական մոտեցումները:
2. Տեսականորեն հիմնավորվել են հիմնական դպրոցում (5-9-րդ դասարաններում) աշխարհագրության ուսուցման գործընթացում հետազոտական առաջադրանքների ներդրման անհրաժեշտությունը, սահմանվել իրականացման ուղիները՝ ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների, միջառարկայական կապերի կիրառումը, ներկայացվել մանկավարժական պայմանները:
3. Մշակվել են դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացմանը միտված մեթոդական համակարգ, աշխարհագրական

հետազոտության գործընթացի փուլեր, ուսուցման ժամանակակից մի շարք տեխնոլոգիաներ:

4. Տեղայնացվել են մի շարք հետազոտական առաջադրանքների նմուշներ, մշակվել «Աշխարհագրություն» դպրոցական դասընթացի շրջանակներում նոր նախագծեր, պրոբլեմային առաջադրանքներ, թեմատիկ միավորներ, տեխնոլոգիական քարտեր, մեթոդական հանձնարարականներ, գնահատման սանդղակներ:

Հետազոտության գործնական նշանակությունը: Տեսական և գործնական հետազոտության արդյունքները կարող են կիրառվել հիմնական դպրոցում հետազոտահեն ուսուցմամբ հետաքրքրված անձանց՝ մանկավարժների, հոգեբանների, գիտնականների, ուսանողների, դպրոցականների կողմից հետևյալ նպատակներով՝

1. Աշխարհագրության ուսուցման գործընթացում հետազոտական առաջադրանքների, միջառարկայական կապերի արդյունավետ օգտագործում,

2. առարկայական ծրագրերի, չափորոշիչների, հետազոտահեն ուսումնական ձեռնարկների, ուղեցույցների, դասագրքերի, մեթոդական համալիրի մշակում,

3. բուհերում «Աշխարհագրության ուսուցման մեթոդիկա» դասընթացի տեսական և գործնական աշխատանքների իրականացում, ուսուցիչների մասնագիտական վերապատրաստումների կազմակերպում:

Հետազոտության գիտական վարկածը այն ենթադրության մեջ է, որ աշխարհագրության ուսուցման գործընթացում 5-9-րդ դասարաններում սովորող դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման գործընթացը արդյունավետ կլինի, եթե՝

- ներդրվեն ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ (օրինակ՝ նախագծային, պրոբլեմային, քննադատական մտածողության, մեդիակրթական ուսուցման տեխնոլոգիաներ) և հետազոտահեն ուսուցման մեթոդական համակարգ:

- կիրառվեն մեր մշակած վերջնարդյունքների գնահատման սանդղակները, հետազոտության փուլերի կազմակերպման ուղեցույցները, թեմատիկ միավորները, հետազոտական առաջադրանքները՝ հիմնվելով գործնական խնդիրների լուծման,

մեդիայի, իրական դեպքերի վերլուծության, միջառարկայական կապերի ապահովման վրա:

Պաշտպանության ներկայացվող դրույթները.

1. Աշխարհագրության ուսուցման գործընթացում դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացումը նպաստում է նրանց ինքնավարությանը, ինքնակրթությանը, տեղեկատվական հոսքերում կողմորոշվելուն, գիտահեն որոշումներ կայացնելուն, հայրենաճանաչողությանը:
2. Դպրոցականների հետաքրքրությունների շրջանակներին առնչվող հետազոտական առաջադրանքները խթանում են նրանց ուսումնառության շարժառիթները, մղում ինքնուրույն գործունեության, բարդ և իրական հիմնախնդիրների լուծումների որոնման, հետազոտական կարողությունների զարգացման:
3. Դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման երաշխիքն ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների դիդակտիկական ներուժի բացահայտումն ու կիրառումն է աշխարհագրության ուսուցման գործընթացում:
4. Դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման համար առավելապես շահեկան է պրոբլեմային ուսուցման, նախագծային գործունեության, քննադատական մտածողության, տեղեկատվական տեխնոլոգիաների, ուսուցման հետազոտական մեթոդների, ուսուցման միջառարկայական և բազմառարկայական մոտեցումների կիրառումը:
5. Բ.Բլումի աստիճանակարգի միջոցով կրթական նպատակների սահմանումը, աշխարհագրական հետազոտության քայլաշարի ներդրումը, մշակված մեթոդական համակարգը, հանձնարարականները, հետազոտական առաջադրանքները, գնահատման սանդղակները նպաստում են աշխարհագրական հետազոտական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը:

Հետազոտության արդյունքների փորձաքննությունն իրականացել

է ՀՊՄՀ Մանկավարժության, ԿՔԱ Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնների նիստերում, ԵՊՀ-ում, Թբիլիսիի պետական համալսարանում միջազգային գիտաժողովներին մասնակցությամբ, Ավստրիայի Բնական ռեսուրսների և կենսաբանական

գիտությունների համալսարանում ուսումնառության, Մոսկվայի պետական համալսարանի «Լոմոնոսով 2017» գիտաժողովին մասնակցության ընթացքում:

Թեմայի մշակվածության աստիճանը: Հետազոտահեն ուսուցման տարրերն ի հայտ են եկել անտիկ շրջանում, դիտարկվել միջնադարյան հայ մտածողների աշխատություններում, սակայն առանձնահատուկ ուշադրության են արժանացել բուհերում և ավագ դպրոցում ներդրման նպատակով XX դարավերջին (ԱՄՆ, ՌԴ, Ավստրալիա, Հնդկաստան, եվրոպական պետություններ): ՀՀ-ում հանրակրթության ոլորտում հետազոտահեն ուսուցումը փորձարկվել է ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքերում (Լ. Ասատրյան, Լ. Նազարյան, Ն. Նազարյան), կրտսեր դպրոցում (Ա. Թոփուզյան, Զ. Գյուլամիրյան, Լ. Պողոսյան, Լ. Ասատրյան), մշակվել և ներդրվել են ուսուցման տեխնոլոգիաներ (Ա. Թոփուզյան, Հ. Պետրոսյան, Լ. Ասատրյան, Մ. Մինասյան, Ս. Ասատրյան և այլք): Ներկայացվել են «Աշխարհագրության» ուսուցման մեթոդիկայի արդիական մոտեցումները, պրոբլեմային ուսուցման սկզբունքները, առկա փորձը (Խ. Սարգսյան, Ա. Մինասյան, Ա.Գ. Աջամօղլյան, Ս. Դայան, Ա.Ա. Աջամօղլյան):

Գիտական հրապարակումները: Ատենախոսության թեմայով հրատարակվել է 9 գիտական աշխատանք:

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, գրականության ցանկից, հավելվածից: Ատենախոսության ծավալը 156 համակարգչային էջ է (առանց հավելվածի): Աշխատանքը պարունակում է 21 նկար և 14 աղյուսակ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ԳԼՈՒԽ 1

**«Աշխարհագրության ուսուցման գործընթացում
դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման
տեսական հիմքերը և մեթոդաբանական նախադրյալները»**

Գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

- «Հետազոտահեն ուսուցման տեսական հիմքերը»,
- «Դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման գործընթացը և պայմանները»,
- «Բ.Բլումի աստիճանակարգի (տաքսոնոմիայի) կիրառումն աշխարհագրության ուսումնասիրման գործընթացում (դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման նպատակով)»:

Սույն գլխում հետազոտահեն ուսուցումը դիտարկվել է ակտիվ ուսուցման և կառուցողական կրթության համատեքստում: Այս տեսանկյունից քննարկվել են Սոկրատեսի, Դեմոկրիտի, Կոնֆուցիոսի, Ջ.Դյուիի, Է.Կանտի, Ջ.Բրյունների, Ի.Պեստալոցցու, Ժ.Ռուսոյի, Ժ.Պիաժեի Ա.Դիստերվեգի, Լ.Վիգոտսկու, Ա.Լեոնտևի, Ա. Դարինսկու, Կ.Ուշինսկու, Շ.Ամոնաշվիլու, Ջ.Փրինսի, Մ.Ֆելդերի, Ռ.Սփրոնքեն-Սմիթի, Զ.Մուրդոքի և այլոց մոտեցումները, արժևորվել հայ գիտնականների ներդրումը (Ա.Շիրակացի, Ե.Կողբացի, Դ. Անհաղթ, Գ.Մագիստրոս, Հ.Սարկավազ, Ղ.Ալիշան, Մ.Աբեղյան, Ե.Նչեցի, Մ.Մամուրյան, Մ.Խրիմյան, Խ. Աբովյան, Գ.Բրուսյան):

Ներկայացվել են «հետազոտահեն ուսուցում» հասկացության տարբեր սահմանումներ՝ ուսումնահետազոտական գործունեությունը բնորոշելով որպես ստեղծագործական գործունեության տեսակ, որը ենթադրում է ուսուցիչների և սովորողների արդյունավետ համագործակցություն, ուսուցիչների կողմից սովորողների ինքնուրույն գործունեությանը մղող հետազոտահեն միջավայրի ստեղծում, որտեղ սովորողները գիտելիքները յուրացնում են հարցադրումների, նպատակների սահմանման և արժևորման, սեփական դատողությունների, փորձի միջոցով:

Կարևորելով ուսուցման գննականության, մատչելիության, հումանիստական մանկավարժության սկզբունքները՝ որպես դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացմանը խթանող պայմաններ՝ առանձնացվել են.

1. Հետազոտական գործունեությանը նպաստող միջավայրի ստեղծումը.
2. Սովորողների անձնային առանձնահատկությունների կարևորումը. և հետազոտական աշխատանքներին ներգրավվածության բարձրացումը.
3. Հետազոտության գործընթացի համակարգվածությունը և շարունակականությունը.
4. Ուսուցիչների վարպետությունը.
5. Միջառարկայական կապերի կիրառումն ուսուցման գործընթացում:

Հետազոտահեն ուսուցման արդյունավետության գրավականներից շեշտադրվել է կրթական նպատակների հստակեցումը Բ.Բլումի տաքսոնոմիայի (նաև Լ.Անդերսենի և այլոց կողմից վերամշակված տարբերակի) միջոցով: Վերջինիս հիման վրա մշակվել են հեղինակային աշխարհագրական խնդիրներ՝ տեղակայվելով «im.dproc.am» կայքում:

Ներկայացվել են դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման գնահատման սանդղակներ, առաջադրանքներ, Ավստրիայում կազմակերպված «Շողացող գիտություն» ծրագրի տրանսդիսցիպլինար հետազոտությունների նախագծեր:

ԳԼՈՒԽ 2

«Աշխարհագրության ուսուցման գործընթացում դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման ուղիներն ու միջոցները»

Գլուխը կազմված է երեք ենթագլխից:

- «Դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացմանը նպաստող աշխարհագրության ուսուցման մեթոդները»,
- «Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը աշխարհագրության ուսուցման գործընթացում՝ որպես դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման ուղի»,

- «Ուսումնական ցիկլի կիրառումը՝ որպես դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման միջոց»:

Ներկայացվել են աշխարհագրության ուսուցման մեթոդիկայի հարուստ զինանոցից այն մեթոդները, որոնք առավել շահեկան են դպրոցականների հետազոտական կարողությունների տեսանկյունից՝ միտվելով դպրոցականների ստեղծագործական մտածողության և կարողությունների զարգացմանը (մասնավորապես՝ ստեղծագործական մեթոդները՝ պրոբլեմային շարադրանքի, մասնակի-որոնողական և հետազոտական գործունեության մեթոդները): Մանրամասն դիտարկվել են դեպքի ուսումնասիրությունը, աշխարհագրական ուսումնական նախագծերը, պրոբլեմային առաջադրանքները, որոնք մշակվել են 5-9-րդ դասարաններում աշխարհագրության և 5-րդ դասարանում «Բնագիտության» ուսուցման գործընթացում կիրառման նպատակով՝ անդրադառնալով աշխարհագրության արդիական և կենսական հիմնահարցերի:


Դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման համատեքստում առանցքային դեր է հատկացվել ուսուցման հետազոտական մեթոդին, իսկ պրոբլեմային ուսուցման և մասնակի որոնողական մեթոդներին՝ օժանդակ նշանակություն:

Որպես հետազոտահեն ուսուցման արդյունավետության գրավական՝ դիտարկվել են աշխարհագրության ուսուցման գործընթացում ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների, առաջընթացի վերահսկողության տարբեր ձևաչափերի ներդրումը:

Հետազոտահեն ուսուցման համատեքստում ներկայացվել են քննադատական մտածողության, պրոբլեմային ուսուցման, նախագծային գործունեության, տեղեկատվական ուսուցման տեխնոլոգիաները:

Բնութագրվել է հետազոտության գործընթացի քայլաշարը, բացահայտվել «Աշխարհագրության» ուսուցման գործընթացում կիրառվող հետազոտական աշխատանքների քայլաշարի առանձնահատկությունները, համադրվել են կիրառվող ուսումնական ցիկլերը, առաջարկվել աշխարհագրական հետազոտական գործընթացի մոդել և տեխնոլոգիական քարտեր (տե՛ս նկ. 1): Ներկայացվել են համապատասխան հեղինակային դասերի պլաններ, ուղեցույցներ,

թեմատիկ միավորներ, հետազոտական քայլաշարին համահունչ նախագծեր:



Նկ.1. Աշխարհագրական հետազոտության ցիկլի փուլերը՝ ըստ Ռոջեր Բայբիի ուսումնական ցիկլի մոդելի (“5E model”), ՄԲ հետազոտության ցիկլի և «ERSI»-ի աշխարհագրական հետազոտության փուլերի

ԳԼՈՒԽ 3

«Աշխարհագրության ուսուցման գործընթացում դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման տեխնոլոգիաների ներդրումն ու կիրառման արդյունավետության փորձարարական հիմնավորումը»

Գլուխը ներառում է երկու ենթագլուխ.

- «Փորձարարական դասերի անցկացման չափանիշները»,
- «Մշակված մեթոդական համակարգի փորձարարական

հիմնավորումը և արդյունքների վերլուծությունը»:

Երրորդ գլխում սահմանվում են փորձարարական դասերի անցկացման նպատակները, չափանիշները, ներկայացվում են ընթացքը և արդյունքները՝ վերլուծելով մասնակից դպրոցներում հետազոտական աշխատանքների իրականացման առանձնահատկությունները:

Փորձարարական ուսուցման նպատակն էր պարզել հիմնական դպրոցի տարբեր դասարաններում հետազոտական աշխատանքների իրականացման արդյունավետությունը, դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման հնարավորությունները՝ անկախ դասարանում ընդգրկված աշակերտների թվաքանակից, դպրոցի միջազգային հավաստագրում ունենալուց, գյուղական կամ քաղաքային բնակավայրում գտնվելուց, ստուգել վարկածի հավաստիությունը:

Փորձարարական ուսուցումն ընթացել է 3 փուլով՝ նախապատրաստման, ուսուցանող և ստուգողական: Կազմակերպվել է հարցում սովորողների հետազոտական կարողությունների զարգացման առանձնահատկությունները պարզելու և ընթացիկ առաջընթացը գնահատելու նպատակով: Հաշվի առնելով հարցման արդյունքները՝ մշակվել են մեթոդական հանձնարարականներ, առաջադրանքներ, տեխնոլոգիական քարտեր, գնահատման սանդղակներ, որոնք թեմատիկ միավորների, ուղեցույցների, հետազոտական աշխատանքների ձևանմուշների հետ միասին կիրառվել են հետազոտության բազա հանդիսացած դպրոցներում:

Ըստ մասնակից դպրոցների՝ փորձարարական դասերի արդյունքները ենթարկվել են համալիր (SWOT) վերլուծության:

Խմբային գնահատման արդյունքում պարզվել է, որ մասնակից սովորողները կարողացել են հետևել տրված հետազոտության պլանին, հավաքել և վերլուծել տվյալներ, հետազոտության արդյունքները ներկայացնել ցուցահանդեսի ընթացքում, անդրադառնալ հետազոտական գործունեությանը:

Հետազոտության արդյունքները ամփոփվել են եզրակացություններում, ներկայացվել են առաջարկություններ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հետազոտահեն ուսուցման վերաբերյալ մասնագիտական գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ հայ և արտասահմանյան առաջադեմ մանկավարժ մտածողները կարևորել են «գործելով սովորելու», սովորողի կենսափորձից բխող ուսումնական առաջադրանքների, հայրենագիտական, զննականության, մատչելիության սկզբունքների պահպանումը: Ներկայումս էլ առաջնային է դպրոցականների հետաքրքրությունների հիման վրա հետազոտական առաջադրանքների կազմակերպումը, նրանց հետաքրքրասիրության խթանումը, միջառարկայական և բազմառարկայական մոտեցումների կիրառումը:

2. Հետազոտահեն ուսուցումը՝ որպես ակտիվ ուսուցման բաղադրիչ, ապահովում է ոչ միայն սովորողների գործուն մասնակցությունն աշխարհագրության դասագործընթացին, այլև նպաստում տեղեկատվական հակամետ հոսքերում նրանց կողմնորոշմանը, աշխարհագրական բարդ հիմնախնդիրների համալիր վերլուծությանը, կայուն զարգացմանը միտված լուծումների բացահայտմանը, հայրենիքը, շրջակա միջավայրը ճանաչելուն, սիրելուն և պաշտպանելուն:

3. Հետազոտական կարողությունների զարգացման առաջնային պայմաններ են հետազոտահեն միջավայրի ստեղծումը, հետազոտական առաջադրանքների կիրառումը, սովորողների կրթական կարիքների բավարարումը, ուսուցիչների վարպետությունը, միջառարկայական

կապերի արդյունավետ կիրառումը, որոնք միտված են դպրոցականների ինքնավարության բարձրացմանը, աշխարհագրական գործնական խնդիրների լուծմանը, հետազոտական, քննադատական, ստեղծագործական մտածողության կարողությունների զարգացմանը:

4. Շնորհիվ հստակ սահմանված կրթական նպատակների, վերջնարդյունքների, ընտրված մեթոդական համակարգի՝ ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումն ունի զգալի դիֆակտիկական ներուժ դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման գործում: Այս տեսանկյունից շահեկան է կիրառել պրոբլեմային ուսուցման, նախագծային գործունեության, քննադատական մտածողության, տեղեկատվական տեխնոլոգիաներ, նրանց համապատասխան ուսուցման հետազոտական մեթոդներ և առաջադրանքներ՝ կրթական նպատակների սահմանումն իրականացնելով Բ.Բլումի տաքսոնոմիայի հիման վրա:

5. Մեր մշակած մեթոդական համակարգը, թեմատիկ միավորները, հետազոտական առաջադրանքները, ուղեցույցները, մեթոդական հանձնարարականները, գնահատման սանդղակները, «im.dproc.am» կայքում հեղինակած առաջադրանքները, աշխարհագրական հետազոտական գործընթացի մոդելը, հեղինակային դասերի պլանները, աշխարհագրության ուսուցման գործընթացին հարմարեցված ուսուցման տեխնոլոգիաները նպաստում են 5-9-րդ դասարաններում աշխարհագրության ուսուցման գործընթացում դպրոցականների հետազոտական կարողությունների արդյունավետ զարգացմանը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվի առնելով կրթության առջև ծառայած արդի մարտահրավերները, մեր հետազոտության արդյունքները և աշխատանքային փորձը՝ առաջարկում ենք.

➤ Հիմնական դպրոցում «Աշխարհագրության» ուսուցումը կազմակերպել հետազոտահեն ուսուցման սկզբունքներին համապատասխան, կիրառել մեր մշակած և փորձարկած գործնական հետազոտական աշխատանքների հանձնարարականները,

քայլաշարերը, գնահատման սանդղակները, ուսուցման տեխնոլոգիաների բնութագրերը, մշակած թեմատիկ միավորները,

➤ Ուսուցման գործընթացում «Աշխարհագրության» և այլ առարկաների միջառարկայական կապերն օգտագործելու նպատակով փորձարկել վերոնշյալ պայմաններին բավարարող մեր կողմից մշակված հետազոտական աշխատանքների նմուշները,

➤ Դպրոցներում ներմուծել նոր հաստիք՝ «Հետազոտական աշխատանքների համակարգող», որը պատասխանատու է դպրոցականների հետազոտական կարողությունների պլանավորված զարգացման համար:

➤ Հեռավար ուսուցման ընձեռած հնարավորությունները օգտագործելու և ունեցած փորձը կատարելագործելու նպատակով օգտագործել համացանցային հարթակներ (օրինակ՝ «Google Classroom», «Moodle»)՝ յուրաքանչյուր դպրոցում ստեղծելով «Հետազոտության կենտրոն»,

➤ Բուհ-դպրոց կապն ամրապնդելու նպատակով իրականացնել տրանսդիսցիպլինար հետազոտություններ դասախոսների, ուսանողների, ուսուցիչների և աշակերտների մասնակցությամբ:

ԱՏԵԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Մկրտումյան Ա.Ս., Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կառուցվածքը, առանձնահատկությունները, նրանց կիրառման արդիականությունն աշխարհագրության ուսուցման գործընթացում (հիմնական դպրոցում) // ԱրԴՀ Գիտական տեղեկագիր, Ստեփանակերտ, 2017, 1, էջ 135 - 142:

2. Մկրտումյան Ա.Ս., Բ. Բլումի համակարգի կիրառումն աշխարհագրության ուսուցման գործընթացում դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման նպատակով // «ԵԴՀ ՀՀ և Մերձավոր արտասահմանի երկրների տնտեսության զարգացման և տեղաբաշխման ժամանակակից հիմնախնդիրները» գիտական հոդվածների ժողովածու, Երևան, ԵԴՀ հրատ., 2017, էջ 96 - 103:

3. Mkrtumyan A. Using guided-inquiry tasks in the «Nature of Armenia» MYP (Middle Years Programme of the International Baccalaureate) unit planner to enhance Geography Learning process for MYP 4 years students (case study: Anania Shirakatsy National Lyceum, Republic of Armenia) // Landscape Dimensions of Sustainable Development: Science – Planning – Governance, Tbilisi, 4-6 October, 2017, pp. 513 - 519.

4. Mkrtumyan A., Muradyan Yur., The usage of the inquiry cycle in the Geography teaching process of secondary schools (case study “Shirakatsy Lyceum” International Scientific-Educational Complex”) // Сборник научных трудов “Границы возможного в рекламном и PR-креативе”, РФ, г. Орел, ОрелГУЭТ, 2017, с. 200-204.

5. Մկրտումյան Ա.Ս., «Իմ դպրոց» կայքի առաջադրանքների կիրառումն աշխարհագրության ուսուցման արդյունավետության բարձրացման նպատակով (<< հիմնական դպրոցների յոթերորդ դասարաններում) // «Մանկավարժական միտք», Երևան, 2018, էջ 67 - 71:

6. Մկրտումյան Ա.Ս., Աշխարհագրության ուսուցման մեթոդների կիրառումը դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման նպատակով // ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու, 2018, էջ 40-45:

7. Mkrtumyan A., Muradyan, Yu., The implementation of project-based learning in the MYP (Middle Years Programme of the International Baccalaureate) unit planner “The economy of the Republic of Armenia” to enhance Geography Teaching Process // “Region and the World”, Yerevan, 2019, vol. 10, N2, pp. 156 - 158.

8. Մկրտումյան Ա.Ս., Հետազոտահեն ուսուցման տեսական հիմքերը // ԱրՊՀ Գիտական տեղեկագիր, Ստեփանակերտ, 2021, 2, էջ 105 - 114:

9. Մկրտումյան Ա.Ս., Քննադատական և նախագծային ուսուցման տեխնոլոգիաների կիրառումը աշխարհագրության ուսուցման գործընթացում՝ որպես դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման ուղի // ԱրՊՀ Գիտական տեղեկագիր, Ստեփանակերտ, 2021, 2, էջ 115 - 123:

АНИ СЕЙРАНОВНА МКРТУМЯН
ТЕХНОЛОГИИ ПО РАЗВИТИЮ ИССЛЕДОВАТЕЛЬСКИХ НАВЫКОВ
ШКОЛЬНИКОВ В ПРОЦЕССЕ ОБУЧЕНИЯ ГЕОГРАФИИ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02- “Методика преподавания и обучения” (география). Защита диссертации состоится в 10-ого июня 2022 г. в 12⁰⁰ на заседании специализированного совета 020 “Педагогика” ВАК РА (Высший аттестационный комитет) при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна, по адресу: 37510, Ереван, ул. Тигран Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования: Существование медийных потоков XXI века, современные тенденции развития географии предполагают вооружить школьников актуальными знаниями и навыками для принятия научно обоснованных решений. Хотя согласно предметным программам “География” и стандартам основной школы, исследовательская деятельность школьников рассматривается как ключевой компонент, роль педагогических технологий в методике преподавания географии не была должным образом изучена с этой точки зрения.

Целью исследования является разработка методической системы, способствующей развитию исследовательских умений школьников (на примере предмета “География”).

Задачи исследования:

1. Изучить имеющийся опыт организации исследовательского обучения в процессе преподавания “Географии”.
2. Описать педагогические условия, способы и средства исследовательского обучения, включая влияние интеграции географии и других предметов.
3. Выявить современные педагогические технологии, соответствующую методическую систему, создать задачи, способствующие развитию исследовательских умений школьников.
4. Апробировать указанную методическую систему, решить поставленные задачи в общеобразовательных школах.

Научная новизна исследования:

1. Проанализированы условия, критерии, этапы работы по развитию исследовательских умений школьников в процессе обучения географии.

2. Разработаны и апробированы практические исследовательские задания, ряд географических проектов на основе междисциплинарных связей и таксономии Б.Блума, рубрики их оценивания, созданы задания для 7-го класса по курсу “География”, размещенные на сайте www.imdproc.am.

3. Выявлен ряд современных технологий обучения, способствующих развитию исследовательских умений школьников (например, технологии проектного, проблемного обучения, развития критического мышления, медиаобучение), и соответствующие методические системы.

Теоретическое значение исследования: Были обобщены теоретико-методологические подходы к развитию исследовательских умений школьников, представлены педагогические условия, определены пути их реализации: применение современных педагогических технологий, междисциплинарных связей. Проанализирована методическая система и разработаны этапы географического исследовательского цикла. Созданы авторские планы уроков, исследовательские задачи, рубрики оценивания, тематические планы.

Практическое значение исследования: Результаты теоретико-практического исследования могут быть использованы в целях эффективной реализации исследовательских задач и межпредметных связей в процессе обучения географии, разработки научно-методических пособий, учебников, задач, в теоретико-практической работе по курсу «Методика преподавания географии» в вузах, в организации профессиональных тренингов для учителей.

Содержание исследования отражено в структуре диссертации, которая состоит из введения, трех глав, заключения, библиографии и приложений. Объем диссертации составляет 156 страниц компьютерного текста (без приложений).

По теме диссертации опубликовано 9 статей. Работа содержит 21 рисунок, 14 таблиц.

MKRTUMYAN ANI S.
TECHNOLOGIES FOR THE DEVELOPMENT OF PUPILS' RESEARCH
SKILLS IN THE GEOGRAPHY TEACHING PROCESS

The abstract of the dissertation for the degree of Candidate of Pedagogical Sciences in speciality 13.00.02- "Teaching and learning methodology" (Geography).

The defence of the dissertation will be held on June 10, 2022, at 12:00 p.m., at the session of the Special Board 020 "Pedagogy" SCC RA (Supreme Certifying Committee) at the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan.

Address: RA, 0010, Yerevan, Tigran Mets Ave 17.

SUMMARY

The relevance of the research: The existence of media streams of the XXI century, modern trends in the development of Geography and its Teaching Methodology require equipping pupils with contemporary knowledge and skills for knowledge-based decision making, where research skills have significant importance. Although inquiry-based education was declared as fundamental in the curricula and standards of secondary school "Geography" subjects, the role of pedagogical technologies was not properly considered from this point of view. Thus, the relevance of the study is linked with the imperfection of the theory and practice of teaching Geography in this context of pupils' research skills development.

The aim of the research is to develop a methodological system that contributes to the development of pupils' research skills (based on the example of the "Geography" subject).

The research objectives are the following:

1. Explore the existing experience about inquiry- based education practices in the Geography Teaching process,
2. Describe the pedagogical conditions, methods and strategies of inquiry- based teaching, including the impact of interdisciplinary connections,
3. Reveal modern pedagogical technologies, an appropriate methodological system, create inquiry-based activities to develop pupils' research skills.
4. Test the specified methodological system, inquiry-based activities in secondary schools.

The scientific novelty of the research:

1. Conditions, criteria and stages of the geographical inquiry process are analysed from the perspective of Teaching Geography.

2. A range of practical inquiry-based activities, geographical projects are developed based on interdisciplinary connections and the implementation of B. Bloom's taxonomy, their assessment rubrics are designed and tested. Numerous tasks of 7th grade "Geography" course are designed and posted on the website "www.im.dproc.am".

3. A number of modern pedagogical technologies and the corresponding methodological systems have been identified that contribute to the development of pupils' research skills (for example, Project-Based Teaching, Problem-Based Teaching, the development of critical thinking, media education).

Theoretical significance of the research: Theoretical and methodological approaches to the development of pupils' research skills are generalized, pedagogical conditions are presented, ways of their implementation are determined. The methodological system was analyzed and a geographical inquiry cycle was developed. Specific lesson plans, inquiry-based activities, assessment rubrics, thematic unit plans were created.

Practical significance of the research: The outcomes of theoretical and practical research can be used for the effective implementation of inquiry-based activities in Geography and interdisciplinary projects, designing scientific and methodological guides, textbooks, tasks, as theoretical and practical activities in the course "Methods of Teaching Geography" in universities, during professional development trainings for teachers.

The structure and the volume of the research: The text of the dissertation consists of Introduction, three chapters, Conclusion, Bibliography and Appendix. The volume of the dissertation paper is 156 pages of computer text (without Appendix).

There were published nine scientific articles to cover the main outcomes of the research. The main text of dissertation contains 21 figures, 14 tables.

